*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ Խորհրդի*
*«01» օգոստոսի 2019թ. որոշմամբ*

*УТВЕРЖДЕНО*
*по решению Совета директоров Страхового ЗАО «РЕСО»*
*от «01» августа 2019г.*

*Խորհրդի Նախագահ՝*
*Գ. Զաքարյան________________________*
*ստորագրություն*

*Председатель Совета директоров*
*Г.Закарян________________________*
*подпись*

«ՌԵՍՈ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

СТРАХОВОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «РЕСО»

# ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

# УСЛОВИЯ СТРАХОВАНИЯ НАЗЕМНЫХ ТРАНСПОРТНЫХ СРЕДСТВ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
3.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
4.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ
5.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
6.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ (ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ) ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՎ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
8.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ
9.ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
10.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՇԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
11.ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
12.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
13.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
14.ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ
15.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՎԵԼՎԱԾ
Վնասի գնահատման մեթոդաբանությունը- Հավելված №1

**СОДЕРЖАНИЕ**

1.ОПРЕДЕЛЕНИЯ
2.ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ
3.ОБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ
4.СТРАХОВЫЕ РИСКИ, СТРАХОВЫЕ СЛУЧАЙ
5.СТРАХОВАЯ СУММА
6.СТРАХОВАЯ ПРЕМИЯ, ПОРЯДОК УПЛАТЫ СТРАХОВОЙ ПРЕМИИ (СТРАХОВЫХ ВЗНОСОВ), ПОСЛЕДСТВИЯ НЕУПЛАТЫ СТРАХОВОЙ ПРМИИ В УСТАНОВЛЕННЫЕ СРОКИ И ПОРЯДКЕ
7.ЗАКЛЮЧЕНИЕ, СРОК ДЕЙСТВИЯ ДОГОВОРА/ПОЛИСА
8.ПРЕКРАЩЕНИЕ ДОГОВОРА/ПОЛИСА
9.ДВОЙНОЕ СТРАХОВАНИЕ
10.ПОРЯДОК И СРОКИ УВЕДОМЛЕНИЯ СТРАХОВАТЕЛЕМ И (ИЛИ) ВЫГОДОПРИОБРЕТАТЕЛЕМ СТРАХОВЩИКА О НАСТУПЛЕНИИ СТРАХОВОГО СЛУЧАЯ
11.ПОРЯДОК ОЦЕНКИ УЩЕРБА, УСЛОВИЯ ОПРЕДЕЛЕНИЯ РАЗМЕРА СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ И ОСУЩЕСТВЛЕНИЯ ВЫПЛАТЫ СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ
12.ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН
13.ПОСЛЕДСТВИЯ УВЕЛИЧЕНИЯ СТРАХОВОГО РИСКА В ПЕРИОД ДЕЙСТВИЯ ДОГОВОРА/ПОЛИСА СТРАХОВАНИЯ
14.СУБРОГАЦИЯ
15.РАССМОТРЕНИЕ СПОРОВ

ПРИЛОЖЕНИЕ
Методология оценки ущерба -Приложение №1

## 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

<u>Սույն Պայմաններում առանձին տերմիններով տրված են հատուկ սահմանումներ, որոնք կիրառելի են միայն սույն Պայմանների շրջանակներում:</u>

1.1. **Ապահովագրող**՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրություն իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձ:

1.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպչաիրավական ձևից, կամ անհատ ձեռնարկատեր կամ գործունակ ֆիզիկական անձ:

1.3. **Շահառու**՝ Ապահովադրի կողմից նշանակված, Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Շահառու կարող է հանդիսանալ այն անձը, ով օրենքի, այլ իրավական ակտի հիման վրա ունի ապահովագրված տրանսպորտային միջոցի և լրացուցիչ սարքավորման պահպանման շահ:

1.4. **Ապահովագրական գումար**՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար (ապահովագրական պատահարների) տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:

1.5. **Ապահովագրավճար**՝ ապահովագրության վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի մասը համարվում է հերթական ապահովագրավճար:

1.6. **Ապահովագրական հատուցում**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի հիման վրա Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

1.7. **Հատուցման սահմանաչափ**՝ Պայմանագրի/Վկայագրի պայմաններով որևէ ապահովագրական ռիսկի կամ ապահովագրության օբյեկտի համար նախատեսված ապահովագրական

## 1. ОПРЕДЕЛЕНИЯ

<u>Отдельным терминам, используемым в настоящих Условиях, даны специальные определения, которые применимы только в рамках настоящих Условий.</u>

1.1. **Страховщик** - Страховое Закрытое Акционерное Общество «РЕСО», юридическое лицо, созданное в соответствии с законодательством Республики Армении (РА) и имеющее лицензию на осуществление страхования не жизни на территории РА.

1.2. **Страхователь** - юридическое лицо, независимо от организационно-правовой формы, или индивидуальный предприниматель, или дееспособное физическое лицо, заключившее со Страховщиком Договор/Полис.

1.3. **Выгодоприобретатель** - физическое или юридическое лицо, назначенное Страхователем, для получения страховых возмещений по Договору/Полису. Выгодоприобретателем может быть лицо, имеющее основанный на законе, ином правовом акте или договоре интерес в сохранении застрахованного транспортного средства и дополнительного оборудования.

1.4. **Страховая сумма** - определенная Договором/Полисом денежная сумма, в пределах которой Страховщик обязуется при наступлении страхового случая (страховых случаев), в предусмотренном Договором/Полисом порядке, выплатить страховое возмещение.

1.5. **Страховая премия** - плата за страхование, которую Страхователь обязан уплатить Страховщику за возможное страховое возмещение в размере, порядке и в сроки, которые установлены Договором/Полисом. Часть страховой премии считается страховым взносом.

1.6. **Страховое возмещение**-сумма, подлежащая выплате Страховщиком Страхователю (Выгодоприобретателю) на основании Договора/Полиса в денежном выражении или равноценным имуществом в результате наступления страхового случая. Сумма страхового возмещения ни в коем случае не может превышать страховую сумму (лимит возмещения).

1.7. **Лимит возмещения** - предусмотренная условиями Договора/Полиса предельная сумма страхового возмещения по какому-либо страховому риску, или страховому обьекту, применительно ко

հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ ապահովագրական պատահարի հաշվարկով կամ Պայմանագրի/Վկայագրի ողջ ժամանակահատվածի համար:

всему или части застрахованного имущества, в расчете на один страховой случай или на весь срок действия Договора/Полиса.

1.8. **Չհատուցվող գումար (Ֆրանշիզա)՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով:

1.8. **Невозмещаемая сумма (франшиза)** – размер участия Страхователя в возмещении ущерба, которая определена Договором/Полисом, в виде определенного процента от страховой суммы или в фиксированном размере.

1.9. **Տրանսպորտային միջոց (այսուհետ՝ ՏՄ)՝** ընդհանուր երթևեկության ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված և սահմանված կարգով ՀՀ տարածքում գրանցման ենթակա ՏՄ (բացառությամբ այն ՏՄ-ների, որոնց շարժիչի աշխատանքային ծավալի առավելագույն արագությունը 50 կմ/ժ է կամ շարժիչի ծավալը չի գերազանցում 50 սմ³ -ը):

1.9. **Транспортное средство (далее ТС)** – ТС, предназначенное для движения по дорогам общего пользования и подлежащее регистрации на территории РА в установленном порядке (за исключением ТС, максимальная скорость рабочего объема двигателя которых 50 км/ч или объем двигателя не превышает 50 см³).

1.10. **Ապահովագրված տրանսպորտային միջոց (այսուհետ՝ Ապահովագրված ՏՄ)՝** Պայմանագրում/Վկայագրում նշված (նույնականացված) ՏՄ:

1.10. **Застрахованное транспортное средство (далее Застрахованное ТС)** – ТС, определенное (идентифицированное) Договором/Полисом.

1.11. **Ապահովագրական ռիսկ՝** ենթադրվող իրադարձություն, որի առաջացման համար կնքվում է Պայմանագիր/Վկայագիր: Որպես ապահովագրական ռիսկ դիտարկվող իրադարձությունը պետք է ունենա դրա առաջացման հավանականության և պատահականության նշաններ:

1.11. **Страховой риск** - предполагаемое событие, на случай наступления которого заключается Договор/Полис. Событие, рассматриваемое в качестве страхового риска, должно обладать признаками вероятности и случайности его наступления.

1.12. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձություն, որը տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

1.12. **Страховой случай** - событие, предусмотренное Договором/Полисом, с наступлением которого возникает обязанность Страховщика произвести выплату страхового возмещения Страхователю или Выгодоприобретателю.

1.13. **Ապահովագրության պայմաններ (Պայմաններ)՝** սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը: Պայմանները հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

1.13. **Условия страхования (Условия)** - изложенные в настоящем документе условия страхования, на основании которых заключается Договор/Полис. Условия страхования являются неотъемлемой частью Договора/Полиса.

1.14. **Ապահովագրության պայմանագիր (Պայմանագիր/Վկայագիր)՝** Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը/Վկայագիրը, տվյալ ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված գույքին պատճառված կամ Ապահովադրի այլ գույքային շահերի հետ կապված վնասը: Պայմանագրի/Վկայագրի դրույթներն ունեն գերակայող ուժ սույն Պայմանների դրույթների նկատմամբ:

1.14. **Договор страхования (Договор/Полис)** – письменное соглашение между Страхователем и Страховщиком, в силу которого Страховщик обязуется за обусловленную Договором/Полисом плату при наступлении страхового случая возместить Страхователю или иному лицу, в пользу которого заключен Договор/Полис, причиненный вследствие этого страхового случая ущерб в застрахованном имуществе, либо ущерб в связи с иными имущественными интересами Страхователя. Положения Договора/Полиса имеют преимущественную силу по отношению к положениям настоящих Условий.

1.15. **Ապահովագրության դիմում (Դիմում)՝** Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների գրավոր հայտնում: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ Ապահովադրի բառերի հիման վրա: Ապահովագրության Դիմումում առկա տեղեկատվության արժանահավատությունը Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ: Դիմումը հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

1.16. **ՏՄ լրացուցիչ սարքավորում (այսուհետ՝ ԼՍ)՝** ՏՄ-ի գործարանային հավաքակազմի մեջ չմտնող սարքավորում, այսինքն՝ սարքավորում, որը տեղադրվել է ոչ ՏՄ-ի արտադրման (հավաքման) ժամանակ ՏՄ-ը արտադրող գործարանի կողմից, կամ ՏՄ-ի զննման հիման վրա Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ ճանաչվել է լրացուցիչ սարքավորում:

1.17. **Ապահովադրի (Շահառուի) Ներկայացուցիչ՝** Ապահովադրի (Շահառուի) անունից որոշակի գործողություններ իրականացնելու լիազորություն ունեցող անձ:

1.18. **ՏՄ վարելու թույլտվություն ունեցող Անձ՝** ՏՄ-ը օրինական հիմքով վարող և Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձ:

1.19. **Վարորդ՝** Ապահովագրված ՏՄ-ը օրինական հիմքերով վարող և համապատասխան կարգի ՏՄ վարելու իրավունք տվող սահմանված նմուշի գործող վարորդական վկայական ունեցող ֆիզիկական անձ (այս սահմանումը օգտագործվում է այն դեպքերում, երբ Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է՝ Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձինք «անսահմանափակ թվով Վարորդներ» պայմանով կնքելու դեպքում):

1.20. **Սուբրոգացիա՝** Ապահովադրի՝ վնասը պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքի անցումը Ապահովագրողին այն վճարված գումարի չափով, որը հատուցվել է ապահովագրական պատահարի հետևանքով:

1.21. **Շահագործման ընթացքում գտնվող ՏՄ՝** շարժիչի գործադրմամբ կամ առանց դրա երթևեկության մեջ գտնվող ՏՄ, որը չի գտնվում կանգառի, կայանման կամ քարշակման (էվակուացման) մեջ:

1.22. **Երթևեկելի մաս՝** ճանապարհի տարր՝ նախատեսված ոչ ռելսազնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

1.23. **Ճանապարհ՝** առնվազն մեկ երթևեկելի մաս ունեցող, իսկ առկայության դեպքում նաև տրամվայի գծեր, մայթեր, կողնակներ և բաժանարար գոտիներ ներառող և

1.15. **Заявление на страхование (Заявление)** - обстоятельства, имеющие существенное значение для определения вероятности наступления страхового случая, письменно сообщенные Страхователем по требованию Страховщика. Заявление может быть заполнено представителем Страховщика со слов Страхователя. Достоверность сведений в Заявлении Страхователь заверяет своей подписью. Заявление на страхование является неотъемлемой частью Договора/Полиса.

1.16. **Дополнительное оборудование ТС (далее ДО)** – оборудование, не входящее в заводскую комплектацию ТС, то есть установленное не при производстве (сборке) ТС заводом-изготовителем ТС, либо признанное дополнительным оборудованием по соглашению Страхователя и Страховщика на основании осмотра ТС.

1.17. **Представитель Страхователя (Выгодоприобретателя)** – лицо, уполномоченное на осуществление определенных действий от имени Страхователя (Выгодоприобретателя).

1.18. **Лицо, допущенное к управлению ТС** – физическое лицо, управляющее ТС на законном основании и указанное в Договоре/Полисе в качестве лица, допущенного к управлению Застрахованным ТС.

1.19. **Водитель** – физическое лицо, управляющее Застрахованным ТС на законных основаниях и имеющее действующее водительское удостоверение установленного образца на право управления ТС соответствующей категории (данное определение используется в случаях, когда Договор/Полис заключен на условях: Лица, допущенные к управлению Застрахованного ТС «неограниченное количество Водителей».

1.20. **Суброгация-** переход к Страховщику, выплатившему страховое возмещение в пределах выплаченной суммы, права требования, которое Страхователь имеет к лицу, ответственному за ущерб, возмещенный в результате страхового случая.

1.21. **ТС, находящееся в процессе эксплуатации** – движущееся ТС с применением двигателя ТС или без него, которое не находится в состоянии остановки, стоянки или буксировки (эвакуации).

1.22. **Проезжая часть**-элемент дороги, предназначенный для движения безрельсовых транспортных средств.

1.23. **Дорога-** оборудованная или приспособленная земельная зона или площадь искусственной конструкции имеющая как минимум

օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցների երթևեկության համար օգտագործվող կահավորված կամ հարմարեցված հողային գոտի կամ արհեստական կառույցի մակերես:

1.24. **Ճանապարհի Մերձակա տարածք՝** տրանսպորտային միջոցների միջանցիկ երթևեկության համար (բակեր, կայանատեղեր, փակ տարածքներ, ավտոլիցքավորման կայաններ և այլն) չնախատեսված, ճանապարհին անմիջականորեն սահմանակից պայմանական տարածք:

1.25. **Ոչ սթափ վիճակ**՝ալկոհոլային խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված՝ մարդու ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակ:

1.26. **Ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ)**՝ Ապահովագրված ՏՄ-ի՝ ճանապարհով շարժման ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած պատահար, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են տրանսպորտային միջոցներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:

1.27. **Անձնական հաշիվ**՝ Ապահովագրողի կայքի կամ բջջային հավելվածի փակ բաժին, նախատեսված Համացանցի միջոցով Ապահովադրի հեռահար մուտքի համար՝ գործողություններ կատարելու նպատակով, այդ թվում ՝սույն Պայմաններով նախատեսված դեպքերում:

1.28. **Ապահովագրողի կայք՝** ինտերնետային էջերի բովանդակությունը, տեղադրված Ինտերնետ ցանցի http://www.reso.am հասցեում:

1.29. **Բջջային հավելված՝** Ապահովագրողի ծրագրային ապահովում, որը նախատեսված է սմարթֆոնների, պլանշետների և այլ բջջային սարքերի վրա աշխատելու համար:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) կողմից «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ տրված ԱՊՈ թիվ 0010 Լիցենզիայի «Ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային)» դասին:

2.2. ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Պայմանների հիման վրա «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ն իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և գործունակ ֆիզիկական անձանց հետ

одну проезжую часть, а при наличии также трамвайные линии, тротуары, обочины и разделительные зоны и используемая в установленном законодательством порядке для движения транспортных средств

1.24. **Прилегающая к Дороге территория**-условная территория непосредственно на дороге, не предусмотренная для сквозного движения транспортных средств (дворы, стоянки, закрытые территории, автозаправочные станции и др.)

1.25. **Нетрезвое состояние**-физическое и (или) психическое состояние человека, обусловленное использованием алкогольного напитка, наркотических средств или психотропных веществ.

1.26. **Дорожно-транспортное происшествие (ДТП)** - происшествие, возникшее во время движения по дороге Застрахованного ТС и при его участии, в результате которого погибли или получили ранения люди, были повреждены транспортные средства, сооружения, грузы или причинен другой материальный ущерб.

1.27. **Личный кабинет** – закрытый раздел сайта Страховщика или раздел в мобильном приложении Страховщика, предназначенный для удаленного доступа Страхователя через Интернет с целью совершения действий, в том числе, предусмотренных настоящими Условиями.

1.28. **Сайт Страховщика** - содержимое интернет-страниц, расположенных в сети Интернет по адресу: http://www.reso.am.

1.29. **Мобильное приложение** - программное обеспечение Страховщика, предназначенное для работы на смартфонах, планшетах и других мобильных устройствах.

## 2. ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ

2.1. Настоящие условия (далее Условия) разработаны в соответствии с Гражданским кодексом Республики Армения (РА), законом РА «О страховании и страховой деятельности» и соответствуют классу Лицензии АПО 0010, выданной СЗАО «РЕСО» Центральным банком (ЦБ) РА, «Страхование наземного транспорта (за исключением железнодорожного)».

2.2. Согласно законодательству РА и на основании настоящих Условий СЗАО «РЕСО» заключает со Страхователями Договоры/Полисы страхования ТС и ДО ТС. с юридическими лицами, а

(Կողմեր) կնքում է ՏՄ-ի և ՏՄ-ի ԼՍ ապահովագրության Պայմանագրեր /Վկայագրեր:

2.3. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագիրը/Վկայագիրը գործում է ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքներում, բացառությամբ զինված հակամարտությունների, պատերազմների, արտակարգ իրավիճակների տարածքների, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

2.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե այդպիսի փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը: Պայմանագրի/Վկայագրի դրույթների և սույն Պայմանների միջև հակասությունների առկայության դեպքում գերակա ուժ ունեն Պայմանագրի/Վկայագրի դրույթները:

2.5. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրված ՏՄ-ի և ԼՍ-ի վնասման դեպքում, Պայմանագրով/Վկայագրով նշված ապահովագրական ռիսկն ի հայտ գալու դեպքում, հատուցման ենթակա վնաս ասելով հասկացվում է այն վնասը, որը ներառում է Ապահովադրի (Շահառուի) բացառապես այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են վնասված Ապահովագրված ՏՄ-ը և ապահովագրված ԼՍ-ը վերականգնելու այն վիճակով, որում նա գտնվել է ապահովագրական պատահարը (ռիսկը) ի հայտ գալու պահին:

2.6. Ապահովադրի կամ Շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված Պայմանագիրն/Վկայագիրն անվավեր է:

2.7. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկվող նամակները և ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված՝ հետևյալ պայմաններից մեկը պահպանելու դեպքում՝

1) ծանուցումը գրավոր տեսքով առձեռն փոխանցվել է Ապահովադրին (Շահառուին) կամ ուղարկվել է պատվիրված նամակ փոստային եղանակով՝ Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովադրի (Շահառուի) հասցեով կամ Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված հասցեով,

2) ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված էլեկտրոնային հասցեին,

также с индивидуальными предпринимателями и дееспособными физическими лицами (Стороны).

2.3. Договор/Полис заключенный на основании настоящих Условий, действует на территории РА и Республики Арцаха, если иное не предусмотрено Договором/Полисом, за исключением территорий вооруженных конфликтов, войн, чрезвычайных положений.

2.4. Положения, содержащиеся в настоящих Условиях, могут быть изменены (исключены или дополнены) по письменному соглашению Сторон при заключении Договора/Полиса или в течение срока его действия, при условии, что такие изменения не противоречат действующему законодательству РА. При наличии расхождений между положениями Договора/Полиса и настоящих Условий преимущественную силу имеют положения Договора/Полиса.

2.5. По Договору/Полису, заключенному на основании настоящих Условий, при повреждении Застрахованного ТС и ДО, под убытком, подлежащим возмещению при наступлении страхового риска, указанного в Договоре/Полисе, понимается ущерб, включающий в себя исключительно расходы Страхователя (Выгодоприобретателя), необходимые для восстановления поврежденного Застрахованного ТС и застрахованного ДО в состояние, в котором оно находилось на момент страхового события (риска/случая).

2.6. Договор/Полис заключенный при отсутствии у Страхователя или Выгодоприобретателя интереса в сохранении застрахованного имущества, является недействительным.

2.7. Письма и уведомления, направляемые Страховщиком Страхователю (Выгодоприобретателю) в соответствии с настоящими Условиями, считаются направленными надлежащим образом при соблюдении одного из следующих условий:

1) уведомление в письменном виде передано Страхователю (Выгодоприобретателю) на руки или направлено заказное письмо почтой по адресу, Страхователя (Выгодоприобретателя) указанного в Договоре/Полисе или ином документе с контактными данными, указанному Страхователем (Выгодоприобретателем);

2) уведомление направлено в виде электронного письма на адрес электронной почты, указанный в Договоре/Полисе или ином документе с контактными данными, указанный Страхователем (Выгодоприобретателем);

3) ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրության միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ Ապահովադրի (Շհառուի) կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված հեռախոսահամարին, կամ էլեկտրոնային նամակի տեսքով՝ բջջային հավելված օգտագործելու միջոցով,

4) ծանուցումը տեղադրվել է Ապահովագրողի կայքի Ապահովադրի անձնական հաշվում, որի մասին Ապահովադիրը տեղեկացվել է էլեկտրոնային նամակով, բջջային հավելված օգտագործմամբ SMS հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով:

Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության դեպքում, Ապահովադիրը (Շահառուն) պարտավորվում է այդ փոփոխության պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին: Եթե Ապահովագրողը նախապես չի տեղեկացվել Ապահովադրի (Շահառուի) Պայմանագրում/Վկայագրում կամ այլ փաստաթղթում նշված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության մասին, ապա նախորդ հայտնի հասցեով Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները կհամարվեն ստացված նախորդ հասցեով ստացված օրվանից:

**2.8.** Սույն Պայմանների **2.7.** կետով նախատեսված ծանուցումներն Ապահովադրի (Շահառուի) կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջիններիս կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները Ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

- ծանուցումը գրավոր տեսքով Ապահովադրին (Շահառուին) առձեռն փոխանցելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,
- փոստով պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձվելու հաջորդող օրվանից,
- էլեկտրոնային փոստով կամ SMS հաղորդագրության կամ բջջային հավելվածով ծանուցում ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից:

**2.9.** Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր (պրոդուկտներ):

**2.10.** Սույն Պայմանների հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տեքստը:

3) уведомление направлено в виде СМС-сообщения по номеру телефона, указанному в Договоре/Полисе или ином документе с контактными данными, указанному Страхователем (Выгодоприобретателем) или в виде электронного сообщения Страхователю с использованием мобильного приложения;

4) уведомление размещено в личном кабинете Страхователя на сайте Страховщика, о чем Страхователь проинформирован по электронном почте, путем направления СМС-сообщения или электронного сообщения с использованием мобильного приложения.

В случае изменения адресов, номеров телефонов и (или) реквизитов, Страхователь (Выгодоприобретатель) обязуется в срок не позднее 3 (трех) рабочих дней с момента такого изменения известить об этом Страховщика. Если Страховщик заблаговременно не был извещен об изменении адреса, номера телефона и (или) реквизитов Страхователя (Выгодоприобретателя), указанных в Договоре/Полисе или ином документе, то все уведомления и извещения, направленные Страхователю (Выгодоприобретателю) по прежнему известному адресу, будут считаться полученными с даты их поступления по прежнему адресу.

**2.8.** Уведомления, предусмотренные в пункте **2.7.** настоящих Условий считаются надлежащим образом полученными со стороны Страхователя (Выгодоприобретателя), и сроки для определенных действий Страхователя (Выгодоприобретателя), рассчитываются Страховщиком следующим образом:

- в случае передачи уведомления в письменном виде Страхователю (Выгодоприобретателю) на руки-со дня, следующего за днем передачи;
- в случае отправки заказного письма почтой-со дня, следующего за получением уведомления, указанного в уведомлении, или на следующий день возврата письма почтовой службой на любом основании;
- в случае уведомления по электронной почте, или посредством SMS-сообщения, или мобильного приложения - с даты, следующей за днем отправки уведомления.

**2.9.** На основании настоящих Условий могут быть разработаны страховые программы (продукты).

**2.10.** В случае несоответствия в армянском и русском текстах настоящих Условий преобладает армянсий текст.

## 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

3.1. Ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի կամ Շահառուի այն գույքային շահերը, որոնք կապված են Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՄ-ի վնասվելու, ոչնչացման կամ կորստի հետ:

3.2. Սույն Պայմանների հիման վրա ապահովագրության ենթակա են.

3.2.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված կամ հաշվառման ենթակա, գործող նորմերի և կանոնների պահպանմամբ ՀՀ տարածք ներմուծված, գործող համապատասխան տեխնիկական զննություն ունեցող ՏՄ-ը, որոնք հաշվառված չեն ՀՀ պետական իրավասու մարմինների և Ինտերպոլի տեղեկատվական համակարգերի տվյալներում որպես առևանգված:

Ապահովագրված ՏՄ-ի տեխնիկական վիճակը պետք է համապատասխանի պահանջվող ստանդարտների պահանջներին, տեխնիկական շահագործման կանոններին, արտադրող գործարանի հրահանգներին և այլ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին:

3.2.2. ՏՄ-ի ԼՄ-ը: Ապահովագրության ենթակա չէ մոնտաժ չպահանջող ԼՄ-ը:

## 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐ)

4.1. Սույն Պայմանների համապատասխան կնքված Պայմանագրով/Վկայագրով հնարավոր է հետևյալ ռիսկերի ապահովագրությունը՝

4.1.1. **«Վնաս»**՝ Ապահովագրված ՏՄ-ի, կամ նրա մասերի վնասումը կամ ոչնչացումը, որը հետևանք է՝

1) ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ), այդ թվում շարժվող կամ անշարժ առարկաների, օբյեկտների հետ բախման (կառույցների, արգելքների, կենդանիների և այլն),

2) կողաշրջման,

3) հրդեհի, հրդեհի մարման, պայթյունի: Սույն Պայմանների շրջանակներում ***հրդեհ*** ասելով հասկացվում է անկառավարելի այրումը կամ պայթյունը, որն առաջացել է արտաքին ազդեցության, Ապահովագրված ՏՄ-ի ինքնաhրկիզման կամ էլեկտրահաղորդալարերի կարճ միացման հետևանքով,

4) տվյալ տեղանքի համար անսովոր բնության տարերային երևույթների, բացառությամբ երկրաշարժի: Սույն Պայմանների շրջանակներում ***տվյալ տեղանքի համար անսովոր բնության տարերային երևույթներ*** են համարվում այն երևույթները, որոնք տվյալ տեղանքի համար հատուկ չեն և ՀՀ իրավասու մարմինների կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմինների (եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության տարածքը ներառում է օտարերկրյա պետության տարածք) կողմից որակվում են որպես

## 3. ОБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ

3.1. Объектами страхования являются не противоречащие законодательству РА имущественные интересы Страхователя или Выгодоприобретателя, связанные с повреждением, уничтожением или утратой Застрахованного ТС и/или ДО.

3.2. На основании настоящих Условий страхованию подлежат:

3.2.1. ТС, зарегистрированные или подлежащие регистрации в порядке, установленном законодательством РА, ввезенные на территорию РА с соблюдением действующих норм и правил, имеющие действующий технический осмотр, не числящиеся в информационных базах данных компетентных органов РА и органов Интерпола как похищенные.

Техническое состояние Застрахованного ТС должно отвечать требованиям соответствующих стандартов, правил технической эксплуатации, инструкций заводов-изготовителей и другой нормативно-технической документации.

3.2.2. ДО ТС. Не может быть застраховано ДО, не требующее монтажа.

## 4. СТРАХОВЫЕ РИСКИ (СЛУЧАИ)

4.1. В Договорах/Полисах, заключенных в соответствии с настоящими Условиями, возможно страхование следующих страховых рисков:

4.1.1. **«Ущерб»** – повреждение или уничтожение Застрахованного ТС или его частей в результате:

1) дорожно-транспортного происшествия (ДТП), в том числе столкновения с неподвижными или движущимися предметами, объектами (сооружениями, препятствиями, животными и т.д.);

2) опрокидывания;

3) пожара, тушения пожара, взрыва. Под ***пожаром*** в рамках настоящих Условий понимается неконтролируемое горение или взрыв, возникшие вследствие внешнего воздействия, самовозгорания Застрахованного ТС или замыкания электропроводки ТС;

4) необычных для данной местности стихийных явлений природы, кроме землетрясения. В рамках настоящих Условий, ***необычными для данной местности стихийными явлениями природы*** считаются те явления, которые не характерны для данной местности и которые компетентными органами РА или соответствующими компетентными органами иностранных государств (если территория страхования по Договору/Полису включает территорию иностранного государства) квалифицируются как

անսովոր,

5) Ապահովագրված ՏՄ-ի վրա կողմնակի առարկաների վայր ընկնելու կամ դիպչելու (այդ թվում այլ ՏՄ-ի անիվների տակից մանրախճի կամ քարերի, այլ առարկաների արտանետման), բացառությամբ Ապահովագրված ՏՄ-ի ներկածածկույթին հասցված կետային վնասումը՝ առանց Ապահովագրված ՏՄ-ի համապատասխան դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ Ապահովագրված ՏՄ-ի ապակուն հասցված կետային վնասումը՝ առանց ճաքերի առաջացման,

6) երրորդ անձանց հակաօրինական գործողությունների (ներառյալ Ապահովագրված ՏՄ-ի առանձին մասերի, դետալների և ԼՍ գողությունը):

Սույն Պայմանների շրջանակներում ***երրորդ անձանց հակաօրինական գործողություններ*** ասելով հասկացվում է՝

- Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի միտումնավոր ոչնչացումը կամ վնասումը,
- անզգուշությամբ Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի ոչնչացումը կամ վնասումը,
- Ապահովագրված ՏՄ-ի և/կամ ԼՍ-ի նկատմամբ խուլիգանությունը, վանդալիզմը,

7) Ապահովագրված ՏՄ-ի սրահից դուրս գտնվող կենդանիների գործողությունների,

8) գրունտի նստվածքի, ճանապարհների կամ կամուրջների փլուզման, ջրի մեջ ընկնելու:

4.1.1.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Վնաս» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ/պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

1) երթևեկության ընթացքում Ապահովագրված ՏՄ-ի ճանապարհի Երթևեկելի մասից դուրս գալու (թեկուզ մասնակի) հետևանքով Ապահովագրված ՏՄ-ի վնասումը կամ լրիվ ոչնչացումը, անկախ Երթևեկելի մասից դուրս գալու պատճառից, այդ թվում՝կառավարումը կորցնելու, սահելու, անսարքության, այլ ՏՄ-ի, առարկայի կամ կենդանու հետ բախումից խուսափելու կամ այլ պատճառով, բացառությամբ՝ ճանապարհի Երթևեկելի մասում մեկ այլ ՏՄ-ի, անշարժ կամ շարժական առարկայի կամ կենդանու հետ բախման պատճառով Ապահովագրված ՏՄ-ի Երթևեկելի մասից դուրս գալու հետևանքով Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասը: Սույն կետը չի տարածվում այն պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված ՏՄ-ի Ճանապարհի Մերձակա տարածքներում երթևեկության ընթացքում:

Սույն կետի (4.1.1.1. ենթակետ «1») համաձայն ճանապարհի Երթևեկելի մաս չեն համարվում ճանապարհի մյուս տարրերը, այդ թվում՝ մայթերը, ճանապարհի եզրաքարերը և բարձրացված անվտանգության կղզյակները, կողնակները, այն է՝ Երթևեկելի մասին հարող,

необычные;

5) падения или попадания на Застрахованное ТС инородных предметов (в том числе выброса гравия или камней, иных предметов из-под колес других ТС), за исключением точечного повреждения лакокрасочного покрытия без деформации соответствующей детали (части, элемента) Застрахованного ТС и/или точечного повреждения стекла Застрахованного ТС без появления трещин;

6) противоправных действий третьих лиц (включая хищение отдельных частей, деталей и ДО Застрахованного ТС).

Под ***противоправными действиями третьих лиц*** в рамках настоящих Условий понимается:

- умышленное уничтожение или повреждение Застрахованного ТС и/или ДО,
- уничтожение или повреждение Застрахованного ТС и/или ДО по неосторожности,
- хулиганство, вандализм в отношении Застрахованного ТС и/или ДО;

7) действий животных, находящихся вне салона Застрахованного ТС;

8) просадки грунта; провала дорог или мостов; падения в воду.

4.1.1.1. При этом, если иное прямо не предусмотрено Договором/Полисом, по риску «Ущерб» не являются страховыми рисками/случаями и не подлежат возмещению:

1) повреждение или полная гибель Застрахованного ТС в результате выезда за пределы Проезжей части дороги (даже частично), и аварии во время движения, независимо от причины выезда за пределы Проезжей части, в том числе, потери управления, заноса, неисправности, во избежание столкновения с другим ТС, предметом или животным, или по другой причине, за исключением ущерба, причиненного в результате выезда Застрахованного ТС за пределы Проезжей части дороги из-за столкновения на Проезжей части дороги с другим ТС, движимым или недвижимым предметом или животным. Настоящий пункт не распространяется на случаи, наступившие во время движения Застрахованного ТС по Прилегающим к Дороге территориям.

Настоящим пунктом (4.1.1.1. подпункт «1») Проезжей частью дороги не считаются остальные элементы дороги, в том числе, тротуары, бордюры и приподнятые островки безопасности, обочины – элементы дороги, примыкающие к Проезжей части,

դրանից ծածկույթի տեսակով տարբերվող կամ համապատասխան գծանշումով առանձնացված ճանապարհի տարրը, ինչպես նաև դաշտամիջյան հողածածկ ճանապարհի բանուկ մասին հարող տարածքը,

2) Ապահովագրված ՏՄ-ի հանդիպակաց ուղեմասով երթևեկելը կամ հանդիպակաց ուղղությունը բաժանող հոծ գիծը հատելը, կամ փակ և միակողմանի երթևեկության ճանապարհի (ների) նշանների պայմանները խախտելը (հանդիպակաց ուղեմաս, հոծ գիծ և այլ հասկացությունները կարգավորվում են ՃԵԱԱՄ ՀՀ Օրենքով և/կամ ՃԵԿ-ով),

3) Ապահովագրված ՏՄ-ի արգելված վայրերում հետընթաց, հետադարձ կամ շրջադարձ կատարելը,

4) Ապահովագրված ՏՄ-ի դիմապակուն պատճառված վնասը,

5) Ապահովագրված ՏՄ-ի լուսացույցի արգելող կամ թարթող ազդանշանի ներքո երթևեկելը կամ երթևեկությունը սկսելը,

6) Ապահովագրված ՏՄ-ի արագության գերազանցումը տվյալ երթուղու/ճանապարհի համար սահմանված (թույլատրված) արագությունից ավելի քան 25 (քսանհինգ) տոկոսով,

7) Ապահովագրված ՏՄ-ը վարելու հետ միաժամանակ բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ համանման այլ կապի միջոցներով խոսելու հետևանքով առաջացած վնասը,

8) Ապահովագրված ՏՄ-ի ապրանքային արժեքի կորուստը, շահագործման հետևանքով բնական մաշվածության վնասները, այդ թվում ներկածածկույթի կետային վնասումը՝ առանց Ապահովագրված ՏՄ-ի համապատասխան դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ Ապահովագրված ՏՄ-ի ապակիներին հասցված կետային վնասումը՝ առանց ճաքերի առաջացման,

9) Ապահովագրված ՏՄ-ի սրահի երեսպատման վնասումը ծխախոտով, սուր կտրող առարկաներով և նմանատիպ այլ միջոցներով,

10) Ապահովագրված ՏՄ-ի լաքաներկային ծածկույթի վնասումը արտաքին գործոնների (ավազ, աղ, փոքր չափի քարեր, ծառերի կամ թփուտների ճյուղեր, կենդանիների, թռչունների կամ միջատների արտաթորանք, ավտոմեքենայի լվացման և այլն) ազդեցության պատճառով, որը թափքի կամ նրա առանձին դետալի (մասի, էլեմենտի) ձևախախտման և/կամ ապակու ճաքերի առաջացման չի հանգեցրել,

11) Ապահովագրված ՏՄ-ի ներքին դետալներին, հանգույցներին և էլեկտրահաղորդալարերին կրծողների կողմից հասցված վնասը,

12) Ապահովագրված ՏՄ-ի էլեկտրահաղորդալարերի կարճ միացումը, առանց հրդեհի առաջացման,

отличающиеся типом покрытия или выделенный с помощью разметки, а также территория, примыкающая к оживленной части земляной дороги;

2) движение Застрахованного ТС по встречному маршруту или пересечение сплошной линии, разделяющей встречное направление, или нарушение условий закрытых и односторонних знаков дорожного (ых) движения (противоположная полоса, сплошная линия и другие понятия, регулируемые Законом РА ООБДД и/или ПДД);

3) движение назад, разворот или поворот Застрахованного ТС в запрещенных местах;

4) ущерб, причиненного лобовому стеклу Застрахованного ТС;

5) начало движения или движение под запрещающим или мигающим сигналом светофора Застрахованного ТС;

6) превышение Застрахованным ТС установленной (разрешенной) скорости для данного маршрута/дороги более чем на 25 (двадцать пять) процентов,

7) ущерб, возникший в результате разговора по мобильному телефону, радиосвязи или других аналогичных средств связи, одновременно с вождением Застрахованного ТС;

8) потеря товарной стоимости Застрахованного ТС, повреждения Застрахованного ТС, вызванные естественным износом Застрахованного ТС вследствие его эксплуатации, в т.ч. точечные повреждения лакокрасочного покрытия без деформации соответствующей детали (части, элемента) и/или точечного повреждения стекла Застрахованного ТС без появления трещин;

9) повреждение отделки салона Застрахованного ТС сигаретами, острыми режущими предметами и другими аналогичными средствами;

10) повреждение лакокрасочного покрытия ТС из-за внешних воздействий (попадание песка, соли, мелких камней, следы воздействия деревьев или кустарников, действие экскрементов животных, птиц или насекомых, мойка автомобилей и т.д.) на Застрахованное ТС, что не привело к деформации корпуса или его отдельных деталей (частей, элементов) и/или возникновения трещин стекла;

11) ущерб, нанесенный внутренним деталям, узлам и электропроводке Застрахованного ТС грызунами;

12) замыкание электропроводки Застрахованного ТС без возникновения пожара;

13) Ապահովագրված ՏՄ-ի մասերի, հանգույցների և/կամ ագրեգատների անսարքությունը, խափանումը, շարքից դուրս գալը դրա շահագործման հետևանքով, այդ թվում ագրեգատների ներքին խոռոչներ օտար առարկաների և իրերի ներթափանցումը (հիդրոհարված և այլն),

14) Ապահովագրված ՏՄ-ի համակարգերին, մեխանիզմներին, հանգույցներին հասցված վնասը, որոնց անսարք լինելը հանգեցրել է հրդեհի,

15) ՏՄ-ի նույնականացման համարի փոփոխությունը ագրեգատների վրա (շարժիչ, թափք և այլն),

16) Ապահովագրված ՏՄ-ի վնասումը, որն առաջացել է Ապահովագրված ՏՄ-ի բեռնման, բեռնաթափման և ցանկացած տրանսպորտային միջոցով տեղափոխման ընթացքում, բացառությամբ Ապահովագրված ՏՄ-ի քարշակումը ճանապարհային երթևեկության բոլոր կանոնների պահպանմամբ,

17) Ապահովագրված ՏՄ-ի վնասումը բեռով՝բեռնման-բեռնաթափման աշխատանքների անցկացման ժամանակ,

18) փոխադրվող առարկաների (բեռի կամ այլ գույքի) տեղափոխման հետևանքով Ապահովագրված ՏՄ-ի վնասումը, եթե այդպիսի տեղափոխումը տեղի չի ունեցել ապահովագրական պատահարի հետևանքով,

19) երկրաշարժի հետևանքով Ապահովագրված ՏՄ-ին պատճառված վնասը:

**4.1.2.** **«Առևանգում»**՝ Ապահովագրված ՏՄ-ի կորուստը այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք ՀՀ Քրեական օրենսգրքի համաձայն որակվում են որպես գողություն, կողոպուտ, ավազակություն, ՏՄ-ին ապօրինաբար տիրանալ առանց հափշտակելու նպատակի (փախցնել) և իրականացվել են բացառապես հետևյալ ճանապարհներով՝

1) Ապահովագրված ՏՄ-ի գողությունը՝ Ապահովագրված ՏՄ-ի ապօրինի, գաղտնի հափշտակությունը՝ առանց Ապահովագրված ՏՄ-ի բանալիների կամ գրանցման փաստաթղթերի (Ապահովագրված ՏՄ-ի սեփականության վկայական և/կամ Ապահովագրված ՏՄ-ի հաշվառման վկայագիր),

2) կողոպուտ՝ Ապահովագրված ՏՄ-ի ապօրինի բացահայտ հափշտակությունը,

3) ավազակություն՝ Ապահովագրված ՏՄ-ի ապօրինի, բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է Ապահովադրի, Ապահովագրված ՏՄ-ը վարելու թույլտվություն ունեցող Անձի կամ Ապահովագրված ՏՄ-ի Վարորդի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ Ապահովագրված ՏՄ-ը հափշտակելու նրանց կողմից ցուցաբերած դիմադրությունը ճնշելու նպատակով,

4) Ապահովագրված ՏՄ-ին ապօրինաբար

13) поломка, отказ, выход из строя деталей, узлов и/или агрегатов Застрахованного ТС в результате его эксплуатации, в том числе вследствие попадания во внутренние полости агрегатов посторонних предметов и веществ (гидроудар и т.п.);

14) причинение ущерба системам, механизмам, узлам Застрахованного ТС, неисправность которых привела к возникновению пожара;

15) изменение идентификационных номеров на агрегатах Застрахованного ТС (двигатель, кузов, рама);

16) повреждение Застрахованного ТС, полученное в процессе погрузки, выгрузки и транспортировки застрахованного ТС любым видом транспорта, исключая буксировку Застрахованного ТС с соблюдением всех требований правил дорожного движения;

17) повреждение Застрахованного ТС грузом во время проведения погрузочно - разгрузочных работ;

18) повреждение Застрахованного ТС в результате перемещения перевозимых предметов (груза или иного имущества), если такое перемещение не произошло в результате страхового случая;

19) ущерб, причиненный Застрахованному ТС в результате землетрясения.

**4.1.2.** **«Хищение»** – утрата Застрахованного ТС в результате событий, квалифицируемых в соответствии с Уголовным кодексом РА как кража, грабеж, разбой, неправомерное завладение ТС без цели хищения (угон), которые осуществлены исключительно следующими путями:

1) кража Застрахованного ТС - незаконная, тайная кража Застрахованного ТС без ключей и регистрационных документов Застрахованного ТС (свидетельство собственности Застрахованного ТС и/или свидетельство о регистрации Застрахованного ТС);

2) грабеж - незаконное открытое хищение Застрахованного ТС;

3) разбой - незаконное, явное хищение Застрахованного ТС, совершенное с применением насилия, опасного для жизни или здоровья, или с угрозой его применения в отношении Страхователя, Лица, допущенного к управлению Застрахованным ТС, или Водителя Застрахованного ТС, с целью подавления ими сопротивления, проявленного из-за хищение Зстрахованного ТС;

4) неправомерное завладениеЗзастрахованным

տիրանալը (փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց Ապահովագրված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերի (Ապահովագրված ՏՄ-ի սեփականության վկայական և/կամ Ապահովագրված ՏՄ-ի հաշվառման վկայագիր),

4.1.2.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Առևանգում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ/պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

1) Ապահովագրված ՏՄ-ի Ապահովադրին չվերադարձնելը՝ Ապահովագրված ՏՄ-ի վարձակալության, վարձույթի, լիզինգի հանձնելու հետևանքով,

2) Ապահովագրված ՏՄ-ի կորուստը, որը որակվում է ՀՀ Քրեական Օրենսգրքով որպես խարդախություն, շորթում, յուրացում և վատնում:

4.1.3. **«Լրացուցիչ սարքավորում»**՝ սույն Պայմանների **4.1.1.** և **4.1.2.** կետերում նախատեսված իրադարձությունների հետևանքով Ապահովագրված ՏՄ-ի վրա տեղադրված ապահովագրված ԼՍ վնասումը, կորուստը, ոչնչացումը:

4.1.3.1. Ընդ որում, եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում սույն Պայմանների **4.1.1.1** և **4.1.2.1.** կետերով թվարկված իրադարձությունները, ինչպես նաև՝

1) Ապահովագրված ՏՄ-ի ԼՍ-ի ապրանքային արժեքի կորուստը, ապահովագրված ԼՍ շահագործման հետևանքով առաջացած բնական մաշվածությունը,

2) առջևի շարժական պանելով ապահովագրված ավտոմագնիտոլայի կամ առջևի պանելի կորուստը, վնասումը, ոչնչացումը, եթե առջևի պանելը թողնվել է Ապահովագրված ՏՄ-ում:

Եթե ՏՄ-ը ապահովագրված չէ «Վնաս» ռիսկի գծով, ապա սույն Պայմանների **4.1.1.**կետով թվարկված իրադարձությունները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում:

Եթե ՏՄ-ը ապահովագրված չէ «Առևանգում» ռիսկի գծով, ապա «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով սույն Պայմանների **4.1.2.** կետով թվարկված իրադարձությունները ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում:

4.2. Եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապահովագրական ռիսկեր/պատահարներ չեն համարվում՝

4.2.1. բարոյական վնասը, բացթողնված օգուտը, եկամտի կորուստը, հասարակ ու հարկադիր պարապուրդը, այլ անուղղակի և առևտրական կորուստները, Ապահովադրի, Շահառուի և երրորդ անձանց

ТС без цели хищения (угон), без ключей и регистрационных документов Застрахованного ТС (свидетельство собственности Застрахованного ТС и/или свидетельство о регистрации Застрахованного ТС);

4.1.2.1. При этом, если иное прямо не предусмотрено Договором/Полисом, по риску «Хищение» не являются страховыми рисками/случаями и не подлежат возмещению:

1) невозвращение Страхователю Застрахованного ТС в результате сдачи Застрахованного ТС в аренду, прокат, лизинг;

2) утрата Застрахованного ТС, квалифицированная в соответствии с Уголовным кодексом РА как мошенничество, вымогательство, присвоение и растрата.

4.1.3. **«Дополнительное оборудование»** – повреждение, уничтожение, утрата застрахованного ДО, установленного на Застрахованное ТС, в результате событий, предусмотренных п. **4.1.1** и **4.1.2** настоящих Условий.

4.1.3.1 При этом, если иное прямо не предусмотрено Договором/Полисом, по риску «Дополнительное оборудование» не являются страховыми рисками/случаями, события, перечисленные в пп. **4.1.1.1** и **4.1.2.1** настоящих Условий, а также:

1) утрата товарной стоимости ДО Застрахованного ТС, естественный износ застрахованного ДО вследствие его эксплуатации;

2) повреждение, уничтожение, утрата застрахованной автомагнитолы со съемной передней панелью или передней панели, если передняя панель была оставлена в Застрахованном ТС.

Если ТС не застраховано по риску «Ущерб», то по риску «Дополнительное оборудование» события, перечисленные в п. **4.1.1** настоящих Условий, не являются страховыми рисками/случаями.

Если ТС не застраховано по риску «Хищение», то по риску «Дополнительное оборудование» события, перечисленные в п. **4.1.2** настоящих Условий, не являются страховыми рисками/случаями.

4.2. Если иное прямо не предусмотрено Договором/Полисом, не являются страховыми рисками/случаями:

4.2.1. моральный ущерб, упущенная выгода, потеря дохода, обычный и вынужденный простой, другие косвенные и коммерческие потери, убытки и расходы как Страхователя и Выгодоприобретателя, так

այնպիսի վնասները և ծախսերը, ինչպիսիք են՝տուգանքները, Ապահովագրված ՏՄ-ի վերանորոգման ժամանակ հյուրանոցում բնակվելը, տրանսպորտային միջոց վարձակալելու ծախսերը, գործուղման ծախսերը, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ժամկետների հետ կապված կորուստները, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով,

4.2.2. սույն Պայմանների **4.1.1.** և **4.1.2.** կետերով նախատեսված իրադարձությունները՝ ապահովագրական պատահարի պահին Ապահովագրված ՏՄ-ում գտնվող գույքի նկատմամբ,

